ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2016թ. **N____Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «դ» կետերով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով՝

Երևանի ավագանին որոշում է.

1. Սահմանել, որ «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան և նպատակն է վայրի կենդանիների պահպանումը, ցուցադրումը, անհետացող տեսակների բազմացումը, տեղական ֆաունայի բազմացումը, վայրի բնության պահպանման վերաբերյալ գիտական ուսումնասիրությունների, աշխատանքների իրականացումը և հրապարակումը, հանրությանը ուղղակի և անուղղակի կերպով էկո կրթություն տրամադրելը, անհետացման եզրին կանգնած տեսակների բազմացումը, ինչպես նաև կենդանիների՝ վայրի բնություն ետ վերադարձի կազմակերպումը՝ ապահովելով տվյալ տեսակի գենոֆոնդի (պոպուլյացիաների) շարունակականությունն ու գոյատևումը վայրի բնության մեջ՝ ընդգրկվելով միջազգային կենսաբազմազանության պահպանման ծրագրերում, մասնավորապես՝ Եվրոպական կենդանաբանական այգիների և ակվարիումների ասոցիացիայում (EAZA) և Բնության պահպանության միջազգային միությունում (ԲՊՄՄ):

2.Թույլատրել «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները.

1) ծառայությունների մատուցում, այդ թվում՝ կենդանաբուժական կլինիկայի գործարկում և կենդանաբուժական ծառայությունների մատուցում,

2) Բնության պահպանության միջազգային միության Կարմիր Ցուցակում (IUCN RED LIST-ԲՊՄՄ Կարմիր ցուցակ) և Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում չգրանցված կենդանիների վերարտադրություն, բազմացում և իրացում,

3)կենդանիների առողջության պահպանման և պլանային կենդանաբուժական միջոցառումների իրականացման նպատակով թմրամիջոցների և հոգեմետ նյութերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դրանց պրեկուրսորների ներմուծման, արտահանման և մեծածախ առևտրի գործունեություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված լիցենզիայի հիման վրա:

4) հանրային սննդի կազմակերպում:

3. Հաստատել «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

Օրինակ ____

/կազմված է 16.06.2016թ. և բաղկացած՝ 2 էջից/

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«___» _____ 2016թ.

N ___-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

_____ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՆՈՐ ՆՈՐՔԻ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 23.10.2009թ.

Գրանցման թիվ՝ 282.210.06577

Վկայական՝ 03 Ա 086322

ՀՎՀՀ՝ 02253207

23.10.2009թ-ին գրանցված կանոնադրության

Թիվ ____ փոփոխությունը գրանցված է

Իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի գործակալության կողմից

«____» _____ 2016թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

ԲԱԺՆԻ ՊԵՏ

_____

«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

/Փոփոխություն/

ԵՐԵՎԱՆ 2016

«Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Կանոնադրության 2.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.1 Կազմակերպության գործունեության առարկան և նպատակն է վայրի կենդանիների պահպանումը, ցուցադրումը, անհետացող տեսակների բազմացումը, տեղական ֆաունայի բազմացումը, վայրի բնության պահպանման վերաբերյալ գիտական ուսումնասիրությունների, աշխատանքների իրականացումը և հրապարակումը, հանրությանը ուղղակի և անուղղակի կերպով էկո կրթություն տրամադրելը, անհետացման եզրին կանգնած տեսակների բազմացումը, ինչպես նաև կենդանիների՝ վայրի բնություն ետ վերադարձի կազմակերպումը՝ ապահովելով տվյալ տեսակի գենոֆոնդի (պոպուլյացիաների) շարունակականությունն ու գոյատևումը վայրի բնության մեջ՝ ընդգրկվելով միջազգային կենսաբազմազանության պահպանման ծրագրերում, մասնավորապես՝ Եվրոպական կենդանաբանական այգիների և ակվարիումների ասոցիացիայում (EAZA) և Բնության պահպանության միջազգային միությունում (ԲՊՄՄ):»:

2. Կանոնադրության 2.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2.2 Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա) ծառայությունների մատուցում, այդ թվում՝ կենդանաբուժական կլինիկայի գործարկում և կենդանաբուժական ծառայությունների մատուցում,

բ) Բնության պահպանության միջազգային միության Կարմիր Ցուցակում (IUCN RED LIST-ԲՊՄՄ Կարմիր ցուցակ) և Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում չգրանցված կենդանիների վերարտադրություն, բազմացում և իրացում,

գ) կենդանիների առողջության պահպանման և պլանային կենդանաբուժական միջոցառումների իրականացման նպատակով թմրամիջոցների և հոգեմետ նյութերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դրանց պրեկուրսորների ներմուծման, արտահանման և մեծածախ առևտրի գործունեություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված լիցենզիայի հիման վրա,

դ) հանրային սննդի կազմակերպում:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել լիցենզիայի հիման վրա:»:

3. Կանոնադրության 2-րդ գլուխը լրացնել 2.5 կետով հետևյալ բովանդակությամբ՝

«2.5 Կազմակերպությունը կարող է համագործակցել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության հետ՝ բնության պահպանության միջազգային միության Կարմիր Ցուցակում (IUCN RED LIST-ԲՊՄՄ Կարմիր ցուցակ) և Հայաստանի Հանրապետության կարմիր գրքերում ընդգրկված վտանգավոր ֆաունայի տեսակների բազմացման և վայրի բնություն բաց թողնման գործընթացում:»:

4. Կանոնադրության 3.2 կետից հանել «ը» ենթակետը:

5.Կանոնադրության 3.3 կետը լրացնել «ը.1» ենթակետով հետևյալ բովանդակությամբ՝

«ը.1) սահմանում է Կազմակերպության կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը,»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է 23.10.2009թ. պետական ռեգիստրում գրանցված «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության բաղկացուցիչ մասը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևանի կենդանաբանական այգի» համայնքային կազմակերպության տնօրենը Երևանի քաղաքապետին հասցեագրված 10.06.2016թ. հ.16/57 գրությամբ ներկայացրել է «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկ՝ որը բխում է Կազմակերպության գործունեությունը ՀՀ օրենսդրության պահանջների համապատասխան՝ առավել արդյունավետ իրականացնելու անհրաժեշտությունից: Մասնավորապես՝ կենդանիների առողջության պահպանման և պլանային կենդանաբուժական միջոցառումների իրականացման նպատակով կազմակերպությանն ընձեռնել հնարավորություն՝ իրականացնելու թմրանյութերի և հոգեմետ դեղերի ներմուծման, արտահանման և մեծածախ առևտրի ձեռնարկատիրական գործունեություն, ինչպես նաև գործարկել կենդանաբուժական կլինիկան, մատուցել կենդանաբուժական ծառայություններ: Բացի այդ՝ սահմանել կազմակերպության գործունեության այնպիսի ուղղություններ, որով հնարավոր լինի առավել արագ և արդյունավետ համագործակցել միջազգային կազմակերպությունների հետ՝ կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

Միաժամանակ, ներկայացված նախագծով փոփոխություն է կատարվում նաև կանոնադրության 3.2 և 3.3 կետերում՝ այն համապատասխանեցնելով գործող օրենսդրության պահանջներին: Մասնավորապես՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի մինչև 19.01.2012թ. գործող խմբագրությամբ Երևանի ենթակայության կազմակերպությունների կառուցվածքի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի սահմանման լիազորությունը վերապահված էր Երևան քաղաքի ավագանուն, իսկ 19.01.2012թ. ուժի մեջ մտած օրենքում կատարված փոփոխության համաձայն՝ այդ լիազորությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև միջազգային համագործակցության շրջանակներում «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի դերը բարձրացնելու և առավել ակտիվ ներգրավվածություն ապահովելու անհրաժեշտությունից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի էական փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ